Digitally signed by YEGHIAZARYAN

Հաստատում եմ

Տնօրեն՝ Ա. Եղիազարյան

«01» «09» 2022 թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Լոռու մարզի գյուղ Լեռնավանի Հովհաննես Ավետիսյանի անվան

միջնակարգ դպրոցի 10_րդ դասարանի

Դասղեկ՝ Կարինե Միսաքի Մաթևոսյան

« 2022- 2023» ուսումնական տարի

Ստուգված է և ենթակա է հաստատման

ՄԿԱԳ փոխտնօրեն / Ն. Հարությունյան /

Կրթադաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

Դասարանի ընդհանուր բնութագիրը
Տասներորդ դասարանը բաղկացած է վեց աշակերտից: Նրանցից մեկը աղջիկ է, հինգը տղաներ են: Որպես կոլեկտիվ՝ դասարանը կարգապահ է, կազմակերպված: Սովորողներին մեջ չկան առանձին խմբավորումներ, համագործակցում են միմյանց հետ: Դասարանում չկան դժվար դաստիարակվող և վարքագծային շեղումներ ունեցող երեխաներ:

Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքներ ուսումնական տարվա ընթացքում

1.Ճանաչել մշակութային և հոգևոր արժեքները
2.Աշակերտներին ուղղորդել և մոտիվացնել դեպի ինքնազարգացում և ինքնակրթություն
3.Ձևավորել քաղաքացիական պատասխանատվություն, արժանապատվություն, հանդուրժողականություն
4.Աշխատանքային հմտությունների և կառուցողական վերաբերմունքի խթանում
5.Անդրադարձ բնապահպանական խնդիրներին, բնության հանդեպ ստացավ վերաբերմունքի ձևավորում, հոգատար վերաբերմունք կենդանիների հանրեպ
6.Վնասակար սովորությունների հանդեպ բացասական վերաբերմունքի ձևավորում

Հոգևոր դաստիարակություն
Սերմանել հոգու բարություն, բարեգթություն, փոխօգնության և ապրումակցման զգացումներ: Պարզաբանել քրիստոնեության, եկեղեցու դերը մեր կյանքում, աղանդների պառակտիչ դերի բացահայտում

Գեղագիտական դաստիարակություն
Ձևավորել գեղագիտական ճաշակ, բացահայտել աշակերտների գեղագիտական հետաքրքրությունները: Ձևավորել պատկերասրահ, ցուցահանդես, թատրոն, կինոթատրոն հաճախելու մշակույթ

Ռազմահայրենասիրական դաստիարակություն
Հանդես գալ զեկուցումներով, կատարել ուսումնասիրություններ՝ հայոց պատմության էջերն բացահայտող, դիտել ռազմահայրենասիրական ֆիլմեր, կատարել ընթերցումներ, բեմադրումներ

Ֆիզիկական դաստիարակություն
Անհատական և դասարանային զրույցների միջոցով վեր հանել վնասակար սովորությունների ձևավորման դրդապատճառները, ուղղորդել աշակերտների դեպի առողջ սննդակարգ և ապրելակերպ: Ձևավորել ֆիզիկական առողջությունը գնահատելու մշակույթ:

Աշխատանքային դաստիարակություն
Կատարե՛լ քննարկումներ մասնագիտությունների շուրջ, գնահատել աշխատանքի դերը մարդու կյանքում: Սեր սերմանել դեպի աշխատանքը, գնահատել և արժևորել աշխատելու ունակությունը ՝ որպես լիարժեքության սկզբունք

Բնապահպանական դաստիարակություն
Ձևավորել համոզմունք, որ մարդու առողջությունը պայմանավորված է մաքուր բնությամբ: Վեր հանել բնությունը աղտոտող հանգամանքները: Ձևավորել ստացավ վերաբերմունք շրջակա միջավայրի հանդեպ:

Դպրոց_ընտանիք կապը
Ծնողական ժողովների, թեմատիկ և անհատական խորհրդատվության միջոցով ծնողների համար կազմակերպել հոգեբանամանկավարժական և արտադասարանական զրույցներ, ներգրավել նրանց դասղեկական աշխատանքներին

Կրթադաստիարակչական աշխատանքներ

	Ուսումնադաստիարակչական աշխատանքների թեմատիկան	Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական նպատակը	Կատարման ժամկետը	Կատարողներ
1-2	Զրույց ՝<< Գիտելիքը ուժ է>>, բեկումնային գյուտեր	Աշակերտները կստանան այնպիսի գյուտերի վերաբերյալ գիտելիքներ, որոնք բեկում են մտցրել գիտական, հասարակական, մշակութային , տնտեսական կյանքում	2.09-9.09	դասղեկ- աշակերտներ
3	Քննարկուն << Ինչ դեր ունեն արդար ընտրությունները պետականության	Կծանոթանան քաղաքացիության առնչվող	16.09	դասղեկ- աշակերտներ

	կայացման գործում>> Աշակերտական խորհրդի անդամների և դասարանի ավագի ընտրության կազմակերպում	կարևոր հասկացություններին։ դիրքորոշումներին, գործողություններին։ Կգնահատեն և կվերլուծեն քաղաքացիական կարևոր դիրքորոշումներ, գործողություններ։ Կհասկանան, թե ինչպիսին պիտի լինի և ինչպես պիտի գործի լավ քաղաքացին		
4-5	Զեկուցումներ՝ << Ժողովրդավար պետությունների անկախության պատմությունից>>	Աշակերտները կհամեմատեն այսօրվա զարգացած, ժողովրդավար երկրների անկախության ճանապարհները, կարժևորեն այն	23.09-30.09	Դասղեկ- աշակերտներ
6-7	Վարժություն՝ << Ասացվածքի ամբիոն>>	Զարգացնել բարոյական արժեքներ՝ մարդկանց նկատմամբ հարգանք, մարդասիրություն, բարություն	7.10-14.10	Դասղեկ- աշակերտներ
8-9	Վարժություն՝ Փոքրիկ պատմություններ մարդկային և հասարակական խնդիրների մասին	Հնարավորություն տալ աշակերտներին բացահայտելու մարդկային , բարոյական,քաղաքացիական որակներ, արժեքներ,հասարական խնդիրներ,որոնք թաքնված են փոքրիկ պատմությունների մեջ,ինչպես նաև քննարկել ժամանակակից բարդ խնդիրներ և վերլուծել հասարկական գործընթացներ	21.10-4.11	Դասղեկ- աշակերտներ
10-11	Վարժություն՝<< Գնահատիր ինքդ քեզ>>	Ձևավորել դրական շարժառիթներ ՝ աշխատել սովորելու համար։Աշակերտը կիմանա՝ ինչպիսի հատկանիշներով կարելի է բնութագրել աշխատողներին,կգնատատեն իրենց և ուրիշների աշխատանքային կարողությունները	11.11-18.11	Դասղեկ- աշակերտներ
12-13	Վարժություն՝<<Աշխատակից ենք ընտրում>>	Կկարողանան գնահատել սեփական կարողությունները և անձնային որակները։ Կհասկանան՝թեևտարբեր մասնագիտություններ պահանջում են տարբեր կարողություններ և	25.11-2.12	Դասղեկ- աշակերտներ

		որակներ,այնուանենայնիվ կան կարողություններ և որակներ, որ կարևոր են բոլոր մասնագիտությունների և զբաղմունքների համար		
14	Քննարկում՝ << Այսօրվա ինձ ուղղված մարտահրավերները>>	Օգնել գիտակցել,որ միջավայրը և շրջապատի վերաբերմունքը մեծ դեր է խաղում անհատի ձևավորման գործում	9.12	Դասղեկ- աշակերտներ
15-16	<<Աղոթք>> Անտուան դը Սենթ Էքզյուպերի	Հնարավորություն տալ արտահայտելու իրենց մտքերը,լսել ուրիշների կարծիքները, հասկանալ, որ գրանք կարող են տարբերվել։Սովորողները կգիտակցեն,որ կենսափորփը մարդուն իմաստուն է դարձնում,դրանով իսկ հարգանք տածեն մեծահասակների նկատմամբ։ Նպաստել ինքնավերլուծության գործընթացին և սեփական ուժերի գնահատմանը	16.12-23.12	Դասղեկ- աշակերտներ
17	Վարժություն՝<<Քաղաքացիական ինքնություն>>	Աշակերտները կիմանան՝ ինչ է քաղաացիական ինքնությունը, քաղաքացի լինելը ինչքանով է առնչվում իրենց՝ հենց այս տարիքում	հունվար	Դասղեկ- աշակերտներ
18-19	Վարժություն՝<< Պատասխանատու քաղաքացի>>	Կծանոթանան քաղաքացիության առնչվող կարևոր հասկացություններին, դիրքորոշումներին, գործողություններին։ Կգնահատեն և կվերլուծեն քաղաքացիական կարևոր դիրքորոշումներ, գործողություններ Կկարողանան համեմատել նույն հարցերի շուրջ իրենց գնահատականները աշխարհուն իրենց հասակակիցների կարծիքների հետ Կհասկանան՝ ինչպիսին պիտի լինի և ինչպես պիտի գործի լավ քաղաքացին	հունվար	Դասղեկ- աշակերտներ
20-	<<Օզոնային շերտի քայքայումը>>	Կիմանան էկոլոգիական հիմնական	փետրվար	Դասղեկ- աշակերտներ

21		աղետներից մեկի՝ օզոնային շերտի քայքայման վտանգների մասին։Կփորձեն աղետը կանխելու ուղիներ առաջարկել		
22	<<Կյանքի ոստայնը>>	Հասկանալ բնության տարբեր օղակների միջև եղած շղթայական բնույթը։ ներմուծել էկոհամակարգերի և դրանց փոխկապվածության գաղափարը	փետրվար	Դասղեկ- աշակերտներ
23-24	<<Ռեպորտաժ համայնքային հիմնախնդիրների մասին>>	Կսովորեն բացահայտել, ուսումնասիրել և ներկայացնել համայնքային հիմնախնդիրներ Կհասկանան, թե քաղաքացին ինչ կարող է փոխել երկրում Կմտածեն առկա խնդիրների լուծման համար համատեղ գործունեության կարևորության մասին	փետրվար մարտ	Դասղեկ- աշակերտներ
25	Քննարկում՝ << Ինչ է իմ կարծիքով գեղեցիկը>>	Աշակերտները տեսակետներ, կարծիքներ կփոխանակեն , կփորձեն մի հայտարարի գալ,թե ինչ է գեղեցիկը	մարտ	
				Դասղեկ- աշակերտներ
26	<<Ինչու է անհրաժեշտ ներառումը>>	Զևավորել հանդուրժողական վերաբերմունք հատուկ կարիքներով մարդկանց հանդեպ: Նպաստել հատուկ կարիքներով երեխաների հանրակրթական դպրոցում ներառման փաստարկների վերհանմանը։Զևավորել ապրումակցում նրանց հանդեպ	մարտ	Դասղեկ- աշակերտներ
27	<<Որը ես չեմ>>	Խթանել միջանձնային հաղորդակցումը, համագործակցությունը, վերլուծական մտածողությունը: Նպաստել ինքնարժևորմանը	մարտ	Դասղեկ- աշակերտներ
28	<<Զատիկ>>	Հաղորդակից լինել Զատիկի ավանդական տոնի խորհուրդին , մեկնաբանել ,սովորել խաղիկներ	ապրիլ	Դասղեկ- աշակերտներ
29	<<Լսում եմ, տեսնում եմ, պատկերացնում	Խթանել հույզերի և զգացմունքների	ապրիլ	Դասղեկ- աշակերտներ

	եմ>>	արտահայտումը, ստեղծագործական մտածողությունը: Օգնել գիտակցել արտահայտման եղանակների և ընկալումների բազմազանությունը		
30	<<Ապագայի անիվ>>	Մտորել որրէ իրադարձության, գաղափարախոսության, դեպքերի զարգացման հնարավոր հետևանքների շուրջ, վերլուծել հետևանքների փոխկախվածությունը	ապրիլ	Դասղեկ- աշակերտներ
31-32	<<Ապագայի ծառը>>	Խթանում է վերլուծելու, պատճառահետևանքային կապերը դիտարկելու, դասակարգելու հմտություններ	ապրիլ մայիս	Դասղեկ- աշակերտներ
33	<<Մեր հաղթանակները >>	Ընդլայնել պատկերացումները երկրների միջև համագործակցության կարևորության և առավելությունների վերաբերյալ, արժևորել անցյալի ձեռքբերումներն ու հաղթանակները	մայիս	Դասղեկ- աշակերտներ
34	<<Մեր անցյալն ու ապագան>>	Խթանել երևակայությունը,վերացական մտածողությունը,օգնել գիտակցել երևույթների պատճառահետևանքային կապը, պատասխանատվություն ձևավորել, եզրահանգումներ անել, որոշում կայացնել	մայիս	Դասղեկ- աշակերտներ
35	Ծրագրի քննարկում	Ամփոփել կատարած աշխատանքի արդյունքները, համակարգել և գնահատել սեփական գործունեությունը		Դասղեկ- աշակերտներ

ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍԱԼՍՈՒՄՆԵՐ

Դասալսման օրը	Առարկան, դասավանդող ուսուցիչը	Դասի թեման	Դասալսման նպատակը

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԽՄԲԱԿՆԵՐԻ

N	Նախասիրական-առարկայական խմբակ	Գեղարվեստական երաժշտական խմբակներ	Մարզական խմբակներ	Այլ խմբակներ
1.				
2.				
3.				
4.				
5.				
6.				

Աշխատանք ծնողների հետ

Սեմինարներ

Անցկացման օրը	Թեման	Քննարկվող հարցերը	Ուսուցչի անուն, ազգանուն	Ծանոթություն

Ծնողական ժողովներ

Անցկացման օրը	Քննարկվող հարցերը	Համառոտ բովանդակությունը	Նշումներ

ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄ

1-ին կիսամյակ		2-րդ կիսամյակ	
Շաբաթվա օրը	դասաժամը	Շաբաթվա օրը	դասաժամը